

# ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՏԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Արձանագրություն N1

քաղաք Երևան

տասը հոկտեմբերի երկու հազար տասներկու թվականի

ՀՀ արդարադատության նախարարության նոտարների որակավորման ստուգման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2012 թվականի հոկտեմբերի 10-ի նիստում ուսումնասիրեց և ամփոփեց նոտարների որակավորման ստուգման թեկնածուների դիմումները:

### ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

Ա. Օրբեյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ա. Հովհաննիսյան - ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի

համակարգի իրավական ապահովման վարչության պետ

Ն. Սարգսյան - ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական

Ռ. Մուկուչյան - Գյումրի նոտարական տարածքի նոտար

Ա. Հարությունյան - Ստեփանավան նոտարական տարածքի նոտար

Հանձնաժողովի մյուս 3 անդամները տեղեկացվել են նիստի մասին, բայց նախօրոք ծանուցել էին մասնակցելու անհնարինության մասին և չեն ներկայացել նիստին: Քվորումն ապահովված էր:

Ներկա էր հանձնաժողովի քարտուղար Լ. Իսկանդարյանը:

### ՕՐԱԿԱՐԳ՝

1. Նոտարների որակավորման քննությունների դիմողների գործերի ուսումնասիրություն՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանելու տեսակետից:
2. Նոտարական քննությունների խնդիրների փուլի գնահատման կարգի սահմանում (հիմք ընդունելով օրենսդրության պահանջները)
3. Նոտարական քննությունների թեստավորման փուլի իրականացման հետ կապված հարցեր:
4. Կազմակերպչական այլ հարցեր:

### ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ՝

**Օրակարգի առաջին հարցի** հետ կապված հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց, որ որակավորման ստուգման համար դիմել է 54 թեկնածու: Բոլոր դիմումները նախնական ուսումնասիրվել են և պատրաստվել է համապատասխան աղյուսակ: Մի շարք դիմումներ նախնական ուսումնասիրության արդյունքում՝ ըստ հանձնաժողովի քարտուղարի կարող են չհամապատասխանել օրենքով առաջադրված պահանջներին: Մինչև վիճահարույց դիմումների քննարկմանն անցնելը, որոշում ընդունվեց ուսումնասիրել մնացած բոլոր դիմումները: Դիմումների արդյունքում արձանագրվեցին հնարավոր մի շարք խնդիրներ, որոնք նույնպես առանձնացվեցին առանձին քննարկելու համար:

Դիմումները քննվել են հաշվի առնելով ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 6-ի «Նոտարների թեկնածուների որակավորման ստուգման կարգը հաստատելու մասին» N 789-Ն որոշմամբ, (վերախմբագրվել է ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի N 1463-Ն որոշմամբ), հաստատված կարգի պահանջները:

Վիճահարույց դիմումների ուսումնասիրության արդյունքում արձանագրվեց, որ 7 դիմումատու, դիմումի հիմքում դրել է հինգ տարի մասնագիտական աշխատանքը, սակայն ներկայացված հիմնավորումները բավարար չէին համապատասխան աշխատանքային գործունեությունը հաստատելու համար: Մինևույն ժամանակ երկու դիմողի մասնագիտական աշխատանքային գործունեությունը իրականացվել էր մինչև իրավաբանության բակալավրի կամ որակավորված

մասնագետի որակավորում ստանալը և հետևաբար չէր կարող համարվել մասնագիտական աշխատանքային փորձ: Առաջարկվեց նշված դիմումները /թվով յոթ/ մերժել, համապատասխան անձանց հնարավորություն տալով հինգօրյա ժամկետում ներկայացնել հավելյալ ապացույցներ:

Հաստատված դիմումների մասով առաջարկվեց հավելյալ ուսումնասիրություններ իրականացնել դիմումին կից ներկայացված փաստաթղթերի, մասնավորապես բարձրագույն կրթության դիպլոմների և աշխատանքային գրքույկների պատճենների, իսկությունը պարզելու վերաբերյալ՝ այդ թվում նաև դրանց տրամադրող կազմակերպություններ հավելյալ հարցումներ ուղարկելու միջոցով:

**Օրակարգի երկրորդ հարցի** հետ կապված Ռ. Մուկույանը նշեց, որ հաշվի առնելով անցած քննությունների ժամանակ հնչեցրած կարծիքները, անհրաժեշտ է վերանայել խնդիրների փուլի գնահատման կարգը: Ըստ գործող օրենսդրության խնդիրների փուլում դիմորդները պետք է լուծեն տաս խնդիրը՝ յուրաքանչյուրինը տաս բալ: Խնդիրների փուլը դրական արդյունքով հանձնած է համարվում ութսունհինգ և ավելի հավաքած դիմորդը: Նախորդ քննությունների ժամանակ հանձնաժողովի որոշման համաձայն խնդրում առկա բոլոր սխալները գնահատվել են հավասարապես՝ տաս միավորը բաժանելով սխալների քանակի վրա: Նշված կարգի արդյունքում էական (օրինակ գործարքի առոչնչությանը բերող սխալներ) և *ոչ էական* (օրինակ որոշ տեխնիկական սխալներ) գնահատվել են հավասարապես: Հաշվի առնելով նոտարի գործունեության կարևորությունը, առաջարկվեց խնդիրներում գործարքների առոչնչությանը բերող սխալների առկայության դեպքում նշված խնդիրը գնահատել զրո միավոր, անկախ մնացած սխալների առկայությունից, իսկ մնացած սխալների համար միավորները նվազեցնել՝ յուրաքանչյուր սխալի համար երկու միավորով:

Ա. Օրբելյանը առաջարկեց նաև, որպեսզի, եթե անձը մի քանի խնդիրներում նշել է միևնույն սխալը, ապա նշված սխալի համար միավորի իջեցում կատարվի միայն մեկ անգամ, և եթե արդեն նշված սխալի համար բալի իջեցում իրականացվել է, ապա կրկնակի իջեցում չի կատարվում:

**Օրակարգի երրորդ հարցի** հետ կապված հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց, որ տեխնիկական հնարավորությունից ելնելով, միաժամանակ քննություն կարող են հանձնել ոչ ավելի քան քսանութ մասնակից: Առաջարկվեց, հաշվի առնելով անցած տարվա դրական փորձը խմբերը բաժանել այբբենական կարգով (ազգանունների մասով), և ցուցակի առաջին քսանյոթ մասնակիցներին հրավիրել քննության առավոտյան տասին /10.00/, իսկ ցուցակի երկրորդ կեսին՝ ժամը տասներեքին /13.00/:

**Օրակարգի չորրորդ հարցի** հետ կապված Ա. Օրբելյանը առաջարկեց՝ հաշվի առնելով նախորդ քննությունների փորձը, ինչպես նաև բազմաթիվ դիմումատուների և փորձագետների առաջարկությունները, հրապարակել հարցաշարը: Միևնույն ժամանակ առաջարկվեց հրապարակել հարցերը և ճիշտ պատասխանները, այլ ոչ թե կոնկրետ թեստերը: Ներկայացվեց, որ համապատասխան համակարգչային ծրագիրը կարող է, նշված հարցաշարից պատահականության սկզբունքով ընտրել հարցը, դրա համար նախատեսված պատասխաններից մեկ, երկու կամ երեք ճիշտ պատասխան (հրապարակված հարցաշարից), ինչպես նաև կլրացվի համապատասխանաբար երեք, երկու կամ մեկ սխալ պատասխանով (սխալ պատասխանները չեն հրապարակվում): Առաջարկվեց, որպեսզի դիմորդը համարվի թեստը ճիշտ լուծած, երբ ընտրել է բոլոր ճիշտ պատասխանները, և չի ընտրել որևէ սխալ պատասխան, և այդ դեպքում նա թեստի այդ հարցի համար կստանա մեկ միավոր, հակառակ դեպքում՝ զրո միավոր: Նշված գնահատման կարգը գործել է նախորդ քննությունների ժամանակ և խնդիրներ չեն առաջացրել:

Միևնույն ժամանակ առաջարկվեց, որպեսզի, հաշվի առնելով նախորդ քննությունների դրական փորձը, ստուդիաները անցկացվեն թափանցիկ, հրավիրվեն բոլոր ՁԼՄ-ների ներկայացուցիչներ, ինչպես նաև ըստ հնարավորության գործընթացը հեռարձակվի ուղիղ եթերում:

Ա. Հովհաննիսյանը առաջարկեց, որպեսզի համապատասխան արձանագրությունը, և մասնակիցների ցուցակները հրապարակվեն նախարարության կայքէջում: Նաև, հաշվի առնելով վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի պահանջները, մերժված բոլոր մասնակիցներին ծանուցել մերժումների մասին, նրանց ժամանակ տալով ներկայացնել համապատասխան հավելյալ ապացույցները, կամ օգտվել վարչական կամ դատական կարգով բողոքարկման իրենց իրավունքից: Հաշվի առնելով օրենսդրության պահանջները առաջարկվեց որպեսզի մերժման մասին որոշումները անհատապես ուղարկվեն էլեկտրոնային փոստի հասցեներին, ինչպես նաև բոլոր մասնակիցները էլ փոստով ծանուցվեն թեստավորման փուլի անցկացման վայրի և ժամի մասին:

Հանձնաժողովի քարտուղարը առաջարկեց թեստավորման փուլը անցկացնել ք. Երևան, Հալաբյան 41ա հասցեում, 14-րդ հարկում գտնվող ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտի համակարգչային լսարանում:

## **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

1. Հաստատել նոտարների որակավորման ստուգումների մասնակիցների ցանկը՝ համաձայն հավելվածի, ինչպես նաև խմբերի բաժանման սկզբունքը՝ այբբենական կարգով ըստ ազգանունների (նշված է հավելվածում):

*ընդունվեց միաձայն*

2. Հաստատել թեկնածուների դիմումների ընդունումը մերժումը հիմնավորող անհատական որոշումները: Որոշումները պետք է ուղարկվեն դիմորդների՝ դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեներով:

*ընդունվեց միաձայն*

3. Որոշվեց բոլոր մերժված թեկնածուներին տրամադրել հինգօրյա ժամկետ՝ հավելյալ ապացույցներ ներկայացնելու համար: Նշված ապացույցները ներկայացնելու դեպքում դիմումները կհամարվեն ընդունված դիմումը ներկայացնելու օրվանից, և հետևաբար նշված անձանց կթույլատրվի մասնակցել որակավորման ստուգման առաջին՝ թեստերի փուլին:

*ընդունվեց միաձայն*

4. Հաստատել որակավորման ստուգման թեստավորման փուլի անցկացման վայրը՝ ք. Երևան, Հալաբյան 41ա, 14-րդ հարկ, և ժամը ըստ խմբերի՝ առաջին խմբի համար առավոտյան տասին (10.00), երկրորդ խմբի համար՝ ժամը տասներեքին (13.00):

*ընդունվեց միաձայն*

5. Հաստատել որակավորման ստուգման երկրորդ փուլի՝ խնդիրների, գնահատման չափանիշները հետևյալ կերպ.

- Եթե մասնակիցը խնդիրը լուծելիս թույլ է տվել այնպիսի սխալ, ինչը բերում է համապատասխան գործարքի առոչնչության, ապա տվյալ խնդրի համար անձը գնահատվում է զրո (0) միավոր, անկախ մնացած սխալների շտկման փաստից:
- Մասնակցի յուրաքանչյուր՝ գործարքի առոչնչության չբերող այլ սխալի համար /տեխնիկական սխալներ և այլն/ գնահատականը իջեցվում է երկու /2/ միավորով, ընդ որում խնդրում հինգ և ավել այդպիսի սխալների առկայության դեպքում խնդիրը գնահատվում է զրո միավոր /բացասական միավոր չի դրվում/: Եթե որևէ խնդիր գնահատվել է զրո միավոր, քանի որ դիմորդը թույլ է տվել գործարքի առոչնչությանը բերող սխալ, ապա դրանում առկա այլ սխալները, որպես սխալ են գնահատվում, այլ խնդիրներում առկա լինելու դեպքում, և դրա համար իջեցվում է երկու միավոր այլ խնդրի միավորներից:

*ընդունվեց միաձայն*

6. Որոշվեց հրապարակել թեստերի ամբողջական հարցաշարը՝ հնարավոր բոլոր ճիշտ պատասխաններով: Նաև որոշվեց ընդունել ի գիտություն, որ համակարգը մեխանիկորեն կատարելու է հարցերի ընտրություն՝ յուրաքանչյուր դիմորդին տրամադրելու համար, ինչպես նաև մեխանիկորեն ընտրելու է մեկ, երկու կամ երեք

ճիշտ պատասխան, ինչպես նաև դրանք լրացնելու է սխալ պատասխաններով մինչև չորս հնարավոր տարբերակի առկայությունը: Որոշվեց, որ թեստի յուրաքանչյուր հարցի համար դիմորդը կստանա մեկ միավոր, եթե իր պատասխանում ընտրի բոլոր ճիշտ պատասխանները և չընտրի որևէ սխալ պատասխան, հակառակ դեպքում նշված հարցի համար դիմորդը կստանա զրո միավոր:

*ընդունվեց միաձայն*

7. Դիմորդները նոտարների որակավորման ստուգմանը պետք է ներկայանան կից հավելվածով սահմանված օրը և ժամին, միաժամանակ իրենց հետ ունենալով անձը հաստատող համապատասխան փաստաթուղթ (անձնագիր, նույնականացման քարտ, կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթուղթ):

*ընդունվեց միաձայն*

Արձանագրությունը կազմված է 6 էջից՝ ներառյալ Հավելվածը:

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. ՕՐԲԵԼՅԱՆ

Հանձնաժողովի քարտուղար՝

Լ. ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

<p><b>ՆՈՏԱՐՆԵՐԻ ԹԵՎՆԱԾՈՒՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԴԻՄՈՂՆԵՐԻ ՑԱՆԿ</b></p>			
№	Անուն, Ազգանուն	դիմումի կարգավիճակ	ստուգման օր, ժամ
1	Աբգարյան Սաթենիկ	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
2	Այվերդյան Մանե	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
3	Ամիրխանյան Անուշ	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
4	Անանյան Գուրգեն	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
5	Ավետիսյան Անի	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
6	Բեկչյան Ռոզա	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
7	Բեջարյան Արմինե	մերժել դիմումը իրավաբանի առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժի բացակայության հիմքով	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
8	Բզնունի Գագիկ	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
9	Գյուլնազարյան Գուրգեն	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
10	Գյուլումյան Մարգարիտա	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
11	Գրիգորյան Մարինե	մերժել դիմումը իրավաբանի առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժի բացակայության հիմքով	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
12	Դադայան Լիլիթ	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
13	Դանիելյան Հեղինե	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
14	Դավթյան Արթուր Ջանիբեկի	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
15	Դավթյան Արթուր Ռազմիկի	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
16	Եսայան Արմինե	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
17	Թորոսյան Հասմիկ	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
18	Խոջանյան Արմեն	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
19	Կակոյան Նվարդ	մերժել դիմումը իրավաբանի առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժի բացակայության հիմքով	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
20	Կարապետյան Մարիամ	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
21	Հակոբյան Անի	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
22	Հասայան Արսեն	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
23	Հակոբյան Մանյա	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
24	Հովհաննիսյան Վահե	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
25	Հովսեփյան Լինա	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
26	Ղուկասյան Տաթև	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
27	Ղուշյան Ստելլա	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 10:00
28	Սակարյան Մամվել	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00
29	Մադաթյան Արծրունի	մերժել դիմումը իրավաբանի առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժի բացակայության հիմքով	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00

30	Մայիլյան Վիկտորյա	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00
31	Մանուկյան Ալմաստ	մերժել դիմումը իրավաբանի առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժի բացակայության հիմքով	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00
32	Մանուկյան Անահիտ	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00
33	Մանուկյան Աննա	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00
34	Մանուկյան Արմեն	մերժել դիմումը իրավաբանի առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժի բացակայության հիմքով	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00
35	Մանուկյան Հասմիկ	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00
36	Մելիքյան Գայանե	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00
37	Մելքոնյան Արմինե	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00
38	Մեսրոբյան Գայանե	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00
39	Սուրադյան Լիլիթ	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00
40	Նազարյան Աստղիկ	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00
41	Շահբազյան Նառա	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00
42	Պապինյան Ավետիք	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00
43	Պողոսյան Նարեկ	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00
44	Սահակյան Ալիսա	մերժել դիմումը իրավաբանի առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժի բացակայության հիմքով	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00
45	Սադաթեյլյան Անահիտ	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00
46	Սադաթեյլյան Աննա	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00
47	Սարգսյան Լուսինե	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00
48	Սարգսյան Մարինե	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00
49	Սարգսյան Տիգրան	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00
50	Սարոյան Վարդուհի	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00
51	Սիմոնյան Արման	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00
52	Տաշյան Տաթևիկ	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00
53	Քամալյան Նոննա	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00
54	Քառյան Արփինե	դիմումը ընդունել	2012թ. հոկտեմբերի 20, ժ. 13:00